Մրցույթ՝ «Երևանի Ալ. Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ռուսաց լեզու» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 10 դասաժամ), «Աշխարհագրություն» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս. , 12 դասաժամ), «ԵՇԱ» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 12 դասաժամ), «Պատմություն» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 25 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (25 դասաժամ), «Երաժշտություն» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 21 դասաժամ), «Տեխնոլոգիա» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 11 դասաժամ), «Ֆիզիկա» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 8 դասաժամ), «Կերպարվեստ» (19 դասաժամ), «Կենսաբանություն» (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դաս.՝ 6 դասաժամ), առարկաների ուսուցչի և դասվարի (18 դասաժամ) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 7**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:30-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին**, Երևանի Ալ. Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 22: Տեղեկությունների համար զանգահարել (010) 39-10-80 հեռախոսահամարով: